

նել նաւ Եկեղեցւոյ մէջ կը տեսնեմ նաեւ թեւաւոր աշտանակներ՝ որոնք սեւ փայտէ և արծաթով ազուցուած, Տիրամօր պատկեր մը՝ ապակիի վրայ նկարուած, որ շատ գեղեցիկ է. նաեւ մարմարեայ ընդունաբան մի՛ որ այժմ մկրտութեան տւազանի տեղ կը դրծածուի, չորս կողմէն զարդաբործուած ծավերն մահուկներով դրասանգներով: Գրմբէթի մի մասին մէջ ազուցուած է փոսփորափայլ քար մը՝ առ որ ամենայն յարգանօք կը նային հաւատացեալը, զոր և ինձ զիտել տուաւ քահանայն զիտակով մը: Եկեղեցւոյ յատակազիծն կատարելապէս բոլորածեւ է կողմանակի վեց մատուններով՝ որոնք նոյնպէս բոլորածեւ են, յորոց կը զարտուղի միայն աւագ իսրանին ետեւի կողմի ձեւն: Եկեղեցւոյ՝ արտաքսապէս աղիսածեփ քարերով շինուածքն՝ զի տարակոյսի մէջ ձգեց, որ յեղանակի գործ ըլլալոն վրայօք: Խտալացի քահանային շիրիմը գտնելու համար գերեզմանատունը կ'երթամ շրջտգայելու, բայց չեմ կրնար գտնել:

Շարայարելի

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ

(շաբ. տես էջ 168)

ԱԽԱԼՑԻԱՆ. կամ ԱԽԱՑԻԱՆ (նոր թերդ). Գղ. ԱԽԱԼՑԻԱՆ. Թ. ՃԱՇԽ. Թ. Ախալցիխ. Վ.

Նեղոյ շոնջ. — Գյիսաւոր բերդաբազար համանուն քաւառի. նշանաւոր հնութեամբն, նկարչական լերանցամէջ զեղեցիկ դիրքով և պատմական բազմադիմի դէպէքերով. Ըստ ազգային և օտար բանասիրաց, հին ժամանակները Ախալցիայի քաւառի մէջ նախ բնակած է Ս. Գրոց մէջ յիշուած Յարեմի Մոսուր թոռն, յորմէ սերած են Մեսխաց բոււած կովկասեան ժողովուրդը, որոց երկիրն կ'ինչնար Հայոց, Վլաց և Եղերաց մէջտեղու. ինչպէս կ'երեւի տառաջին անգամ Վրացից տի-

բելով իրենց այս ստհմանակից երկրի, անուաներ են զայն Սաւ-Մցիւէ (Երկիր Մեսխաց), և զինաւոր քաղաքն ալ Ախալցիկիւէ (Նոր թերդ): Վարդան աշխարհազիր յիտ ըսելու թէ «Սամցիւէ Ախալցիա է», կը յաւելու նաեւ «Իշխանաց երկիրն է»: և յերափի եղաւ ժամանակ մը, որ Ախալցիան ազատ իշխաններով կառավարուեցաւ, և նոյն ատեն կոչուեցաւ ի Հայոց իշխանաց երկիր:

Ըստ բնական աշխարհազրական բաժանման՝ Ախալցիան իր գաւառով, յատուկ մասն համարուած է Հայաստանի: Մեր աշխարհակալ թագաւորաց ժամանակ, երբեմն բոլորովին Հայոց ձեռքը մնացած է, և երբեմն ալ հարկատու կամ հպատակ եղած: Կը համապատասխան Տայոց լեռնու նսհանգի ձակը գաւառի:

Շատ պատերազմեր և աղետալի տեսարաններ ունեցած է Ախալցիան, զանազան ժամանակ. և իր բնակչաց բաջութիւնն միշտ գովուած է, և առած մ'ալ յատկացուած, թէ «Մէկ Ղարսեցի երեւանցի կ'արժէ, և երկու Ղարսեցի մէկ Ախալցիացին»:


ԺԴՔ գարու մէջ, Թաթարաց արշաւանաց ժամանակ, երբ Վլաց տէրութիւնն խիստ տկարացած էր, Ախալցիայի՝ ինչպէս նաեւ Ախալցիալաքի բնակիչը անկախութեան կը ձգտին և ինցնապուին կ'ուզեն կառավարել իրենց երկիրը: Այդ ազատութեան և անկախութեան մեծապէս կը նպաստէ քաղաքին անառիկ զիրցն և տեղացւոց անվեհէր քաջութիւնն, որով ժդի գարու տուաջին կիսուն մէջ, Վլաց Գէորգ թագաւորն ստիպուեցաւ ազատ և անկախ համարել Ախալցիան և Ախալցիալաքը՝ իրենց զտառովը և առաջին Ազարէկ (Հայրիշխան) եղաւ. Սարգիս անուած մէկը, և այնուէնետեւ այս երկիրն փոխանակ Սա-Մցիւէ կոչուելու, կոչուեցաւ Սա-Արարէկ (Երկիր Արարէկաց կամ ըստ մեզ իշխանաց երկիր):

1414 (Պէտք) թուին իւանէ Աթարէկի ժամանակ, Ախալցիայի մէջ պանդխատութեամբ բնակող Պարսիկները Հայոց և Վլաց հետ կուռելով և թշնամանալով, գաղտուկ քաղաքէն ենելով կ'երթան Բագրեւանդայ Վա-Ա.Բ.Ա.Բ. @

զարշակերտ բաղաբը, և Յուսուփ ամիրային գանգասելով կը գրգռեն զիմել Տայոց աշխարհի վրայ, և առաջնորդելով ամիրայի գորաց կու գան մինչեւ Ախալցիս, և նենցովթեամբ բաղաբը կը մատնեն անօրինաց ձեռքը: Առաքել Քալրիմեցին ալ կը յիշէ ՊԼ. (= 1444) Թուփն Զահնշահի բաղաբիս վրայ յարձակին և բնակիչները գերի տանին: Խակ 1484ին Մողոլաց անիշխանութեան ժամանակ, Եաղուպ խանը, յետ Զաւախըր աւարելու կու գայ կը պաշարէ Ախալցիսն:

Մինչեւ 1463 թուականը աթարէկները

կը հաստատուէին Վրաց թագաւորներէն, այդ տարին Կուարկուարէ աթարէկը ինքինը բոլորովին անկախ ըրաւ: Չուր անդ Վրաց թագաւորներն աշխատեցան հպատակեցնել աթարէկները, որով և անիթ եղան ոչ սակաւ արինահեղութեանց և պատերազմաց: 1547ին երբ Թուրքերը սկսան յառաջ խաղաղ ձորոսի և Կուրայ հովտաց մէջ, Շահ-Թահմազ-Խանը օգնութեան եկաւ նոյն ժամանակ Խշոող Փէյխոսրով աթարէկին: 1553էն 1580, այս երկի մէջ շարունակաբար անպակաս եղան պատերազմը, կո-



Ախալցիս, հիմ քաղաքի և բերդի տեսարանը:

տորածք և աւերմունք և կոփն գետ աւելի սաստկացաւ երբ Կուարկուարէ և Մանուչար զիցազունք՝ յաշորդեցին իրենց Փէյխասրով հօրը: Աւանդութիմը յատ բաներ կը պատճէ այս կրկին բաշաց՝ եօթը տարիներու մէջ ընդդէմ Թրբաց մղած յազմող պատերազմներու վրայ. բայց ափսոն որ իրենց բաջնութիւնն միայն բանի մը տարի ուշացուց իրենց կործանումը, և ինչ կարող էին ընել ամբողջ Օսմանեան բանակին զէմ: Վերջապէս 1579ին Թուրքերը Ախալցիսյի ափ-

բեցին. Նոյն տարին Կուարկուարէ և իր եղբայրն Մանուչար կ. Պօլիս երթալով, պատուով ընդունուեցան: Մանուչարի կարգէ դուրս բաջութիւններն և անձնական ձերբերը, իրեն ձգած էին Թրբաց զարմանը. այդ պատճառու, սուլտանը զինքը իր հայրենիքը գարձուց, և փաշայութեան տիտղոս տուաւ:

Սակայն ինչպէս կ'երեւի, շուտ զղացին Թուրքերը, Մանուչարի այս կերպով տեսակ մը անկախութիւն տրուելուն, և փորձեցին իրեն փասել, բայց չյաշողեցան: 1587ին

խաղաղութիւն հաստատուեցաւ, և Ախլցիսան
թրբաց ձեռքէն ելաւ, և Մանուչար իշխաց
այնուհետեւ մինչեւ 1614 թուականը, և մեռ-
նելով յաջորդ թողուց իր համանուն որդին
Մանուշար:

Մուրատ Դ 1625ին պաշարել տուաւ Ա-
խլցիսան՝ Սէփէր փաշայի ձեռքով, և յետ
23 աւուրց բնակիչը կամոնին անձնատուը
եղան : Այնուհետեւ ձեւացաւ Ախլցիսայի
փաշայութիւնը, և առաջին փաշան եղաւ
Սէփէր, որոն ապա յաջորդեցին իրեն սե-
րունըը:

Ծուաները պաշարեցին Ախլցիսան 1810ին
թարմագով զօրավարի ձեռքով, և տիրեցին
յետ ահաւոր պատերազմաց՝ տասնեւով
տարի վերջը, Փասցեփչի ձեռքով :

Այդ միջոցին (1828), Ախլցիսան՝ Աս-
սիական Տաճկաստանի ամուր և հարուստ
քաղաքներէն մին էր. վաճառականութիւնը,
որ մեծաւ մասամբ Հայոց ձեռքն էր, շատ
բանուկ էր, յարաբերութիւն ունէր Երեւա-
նու, Թիֆլիսու, Տրապիզոնի և Կարնոյ հետ:
Բաց ի բերդերէն, շըջապատ ամուր պարիսպ
մոնէր աշտարակաղարդ :

Ազրիանուազօնոյ զանազրութեամբ՝ երբ
Ախլցիսան ուրիշ երկիրներու հետ բոլորո-
վին Ծուասց տրուեցաւ և կարինը ինքսուին
թրբաց ձեռքն մնաց, կարնեցի բազմամիւ-
չայեր՝ իրենց զաղթավայրը ընտրեցին Ա-
խլցիսա բաղարքը, և յետ բազում վշտաց
և ճանապարհի նեղութեանց 1830 թուին
եկան հասան իրենց ընտրած երկրորդ հայ-
րենիըը :

Յետ պատերազմին բոլոր բաղարքը աւ-
րուած կործանուած վիճակի մէջ կը գտնուէր,
որով նոր զաղթականաց համար հարկ էր
նոր բաղարք մը հիմնել. այդ պատճառաւ
բաւական ժամանակ վրաններու տակ բնա-
կեցան, և տէրութիւնն բաշխուեցաւ դրամ,
ցորեան, արուեստաւորաց համար, մետաքս,
բամբակ, երկաթ, և զանազան նիմեր և
գործիքներ: 1832 տարւոյ զանան սկիզբը,
սկսաւ այժմեան նոր բաղարքի շնութիւն :

1833 թուին եղած աշխարհազրէ մը կը
բաղնեն Ախլցիսայի բնակչաց և տանց հե-
տեւեալ թիւերը .

Բնինք		385	առուն	623	արք
Հայ-կաթ.	.	26	"	64	"
Հայ-լուս.	.	44	"	94	"
Վրացիք.	.	117	"	327	"
Հրեայք.	.	24	"	42	"
ՆՈՐ ԳԱՂԹԱԿԱՆ					
Հայ-լուս.	.	1542	"	4004	"
Հայ-կաթ.	.	150	"	296	"

Գումարն 2268 առուն 5447 արք:

Այս թիւերէն կ'երեւին, որ պատերազմէն
առաջ, բաղարքին բնակչաց մեծամասնութիւնն
կը կազմէին Հայ-կաթողիկէները : Մեծին
Միկիթարայ Աբրայի աշակերտն Հ. Յակոբոս
վ. Բուզայեան 1728ին բաղարք բարողած
ժամանակ, իրեն ունինդիր եղած են մինչեւ
2000 հոգի. նա հոս հաստատած է զա-
նազան եկեղեցական հանդէններ, ինչպէս
Ռուսուայ, Թաղումի Քրիստոնի, և այլն ։ Նոյն
տարին (1728) մինչ ահաւոր համանարակ
ժանտախարը, անհամար մարդիկ մահուան
կը մատնէր, Հ. Բուզայեանի խորհրդով շատ
ընտանիքներ լիւր կը փախչին և կ ազատին,
իսկ ազակութեան կամ շքաւորութեան պատ-
ճառաւ բաղարքը մացողները՝ զրեթէ ամբողջ
կը մեճնին :

Ախլցիսան այժմ ձեւացած է երկու մա-
սերէ. Հին բաղարքը (Ծապատ) կառուցուած
է կուրայ օժանդակ և երբեմն Ախլցիսա և
այժմ Փոյսուղ կոչուած գետոյն ձախակող-
մը, բանի մը ալէճեւ բլուրներու վրայ. ճիշդ
արեւելեան բաղարքաց նմանութիւն ունի,
նեղ ծամածուա փողոցներով, փարը փայտա-
շէն կամ կոչտ բարաշէն և երբեմն նաեւ
գետնափոր տներով :

Գետեակերպէն զէպ ի վեր բարձրացող,
խորտակորա, ահեղատեսիլ և մեծաւ մասամբ
հրատական պորփիրէ ձեւացած բարձանց
վրայ, զեռ կը տեսնուին հին բերդի ատամ-
նածեւ վերջացած պարիսպներն, և խորա-
ծորից մէջ կիսակործան հին զրանց կամա-
րակապներն: 1828ին պատերազմէն վերջ
կործանուեցան բոլոր մզկիթներու և բերդի
մօտ գտնուած տներն: Մզկիթներու մէջ ա-
մէնէն նշանաւորն բերդի մէջ կառուցուածն
էր, որ արարած նարտարապիտութեան զուփ
Է. R. A. R. @

գործոց մը կրնայ համարուիլ : Բերդի շինովեան ժամանակն անծանօթ է, յոմանց կը համարուի թամար թագուհին շինուած . իսկ մզկիթն կառուցուած է, հին աթարէ կաց սերունդ Ահմէտ փաշայէն, իտալացի ճարտարապետի մը ձեռցով : Կանոնաւոր խորանարդի մը վրայ բարձրացած է կիսարողոր 49 ուր տրամագծով կապարապատ գմբէն . ձեռով ճիշդ նման է կ. Պօլսի Ս. Սոփիայի, պատուհանները զարգարուած զունաւոր ապահներով, որոց նկարներն կը ներկայացնէն Պուրանի զանազան խօսքերը : Գափին եւս գեղեցիկ է, երեց փոքրիկ գմբէններ բարձրացած են երկաթաքարէ սեանց վրայ, որոց խարիսխներն ե զլուխներն պղընձանոյլ են : Գատմի մէջ կայ Հայկական խաչարձան մը, հազի քանի մը զիր ընթեռնի արձանագրութեամբ : Բերդի հարսաւային զրան վրայ բանզակուած արարական արձանագրութենէն կը յայտնուի, որ բերդս նորոգուեր է 1707ին . իսկ մզկիթի շինովեան համար ալ, որ կառուցուած է 1752ին, ուրիշ արձանագրութիւն մը կայ գամֆի դրան վրայ : Նշանաւոր էր նաև բերդի մինարէն 130 ոտք բարձրութեամբ, սրբատաշ քարէ, զոր թիւուց կործանեցին : Բերդէն իրբե 10 վերսու հետաւորութենէ, մեծածափ ջրմուղով, վերոյիշեալ Ահմէտ փաշան քերել տուաւ ջուր՝ մինչեւ մզկիթի գամիթը : Պատերազմի ժամանակ մզկիթն շատ չփասուեցաւ և թիւուց, քանի մը նորոգութիւններ և փոփոխութիւններ ընելով եկեղեցւոյ վերածեցին զայն :

Փոցինով գետի վրայ ձգուած փայտեայ կամուրջ մը կը միացընէ հին քաղաքը նորի (Պաւա) հետ, ուր կան բաւական թուուի նոր շինուած պալատներ, գեղեցիկ և նաշակաւոր տներ, հարիբաւոր կրպակներ, կառաւորեալ փողոցներ, սրբատաշ քարէ եկեղեցիներ, բազմաթիւ աղբիւներ, կարաւանատներ, բաղնիքներ, վարժարաններ, հասարակաց պարտէզ, և այլն :

Երկար ժամանակ վրաց հետ խան ապրելով քաղաքին բնիկ Հայ-կաթողիկները, և մոռանալով իրենց մայրենի լիզուն, այժմ մեծաւ մասամբ վրացերէն կը խօսին, թէ և իրենց եկեղեցիներու մէջ միշտ հայերէն կը

կատարուին ժամերգութիւնը և այլ աստուածային պաշտամունք : Վերջին հրատարակուած կովկասի ազգաբնակութեանց աշխարհագրի մէջ, մեծ օհալմամբ և կամ զգիտեմ ինչ զիտմամբ, քաղաքիս Հայ-կաթողիկաց թիւն զրած են միայն 739 հոդի, և բոլոր վրախոս Հայ-կաթողիկները խառնած են վրացիներու հետ կամ յիշած են Հովիմէւկան-կաթողիկ անուամբ :

Մշակը 1883 տարւոյ 70 թուույն մէջ, պաշտօնական հրատարակութեանէ հանելով, հրատարակած և Անգլիկանիս Հայ-կաթողիկաց թիւն, յորմէ կը քաղենք քաղաքիս Հայ-կաթողիկաց իւրաքանչիւր եկեղեցւոյ ունեցած ծխականներու հետեւեալ թիւերը .

Ս. Մկրտիչ	եկեղեցի	1180	ծխականներ
Ս. Խոչ	"	748	"
Ս. Աստուածածին	"	740	"
Ս. Խոչ Եղեւման	"	708	"

Գումարն 3376 ծխականներ :

Այս թիւերն կը վերաբերին 1882 տարւոյ, իսկ եթէ առաջ զալով հաշուենք նաև 17 տարուան մէջ աւելցած անձանց թիւերը, պիտի տեսնենք որ Ախալցխա քաղաքի Հայ-կաթողիկները 4000ի կը մտենան :

Քաղաքս կովկասի Հայ-կաթողիկաց կերպնավայրն է, և իւր հոգեւոր կառավարութենէն կախումն ունին Ախալցալաքի, Լոռուայ և Ալեքսանդրապոլի վիճակներն . իսկ հոգեւոր կառավարութիւնն՝ քանի որ կովկասը չունի առանձին Հայ-կաթողիկ եպիսկոպոս, վերաբերութիւնն ունի Սարամովիի լատին եպիսկոպոսն : Այժմ ինչպէս ամրող կովկասը, նոյնպէս և քաղաքիս Հայ-կաթողիկներն տիւուր վիճակի մէջ կը գտնուին :

Կարնէն գաղթող Հայ-կաթողիկներն առաջ բնակեցան հին քաղաքի մէջ, իրենց կրօնակից վրախոս Հայերու հետ, և շուզեցին տէրութեան առաջարկած հողի վրայ նոր եկեղեցի շինել, բաւականանալով արդէն եղած ազգային կաթողիկ եկեղեցեցիներով : Բայց ըշէ ատենէն, տեղացի վրախոս Հայ-կաթողիկաց ցուցած հակակրութենէն և անհերասիրութենէն կը ստիպուին նոր քաղաքի

Էլջ Հիմնել այժմեան Ա. Աստուածածնի Վերափոխման եկեղեցին 1833-34 թուական-ներու մէջ, և մեր Վանաց միաբան, և գաղթականց առաջնորդ բազմապիհն Հ. Երիբում վ. Ալթեան կատարեց Հիմնարկութեան օրհնութիւնը, Ախալցխայի ուրիշ բնիկ քահանայից հետ և առաջի սպայակոյտ աւագանուոյ տեղույն՝ իշխանացն Ծուռաց և առաջի բազմամիուս ժողովոյ համօրէն քաղաքին յամենայն ազգաց »: Եկեղեցւոյ մօտ կառուցւած Վերափոխման ուսումնարանի վրայ հետեւալը կը կարգանց 1882 տարւոյ Մշակի 184 թուոյն մէջ. «Ա. Վերափոխման ուսումնարանի ամենածաղկած ժամանակն էր, երբ Հայր Ալթեանցը, զասառու էր այս ուսումնարանում. այդ ժամանակի զաս զաս մանկաթիք անիստիք թէ Լուսաւորչական և թէ Հայ-կաթողիկ դիմում էին Հայր Ալթեանցի մօտ և յազեցնում իրանց ծարաւը. Երշանկայիշատակ Հայր Ալթեանցը տիւ և գիշեր աշխատում էր իր աշակերտաց և ուսումնարանի առաջարկութեան վրայ: Հայր Ալթեանցը և Հայր Եսային առաջնըն եղան, որ սերմանեցին Ախալցխայում լուսաւորւթեան և ուսումնասիրութեան գաղափարի սերմը՝ ամեն Հայ անհատի սրտում. նոցա աշակերտներից է և մեր Աղ. Արարատեանը: — Մեսաւ Հայր Ալթեանցը, նորա հետ մեր ուսումնարանը ընկաւ մի անբուժելի հիւանդութեան մէջ, որովհետեւ Վենետիկից էլ չեկան մեզ վարդապետներ»: Հ. Ալթեանցի յիշատակն զեռ վառ է քաղաքին բնակչաց սրտերու մէջ. Նորա գերեզմանն է եկեղեցին զորս անմիջապէս աւագ խորանի ետեւը, հանդերձ յատուկ քանդակազարդ տապանացարով, և ուխտատեղի եղած է, «Կ որպէս սրբոյ տանին զհողն ի շիրմէն վասն ախտաժետաց; և ասեն լինի բժշկութիւն»: Եկեղեցւոյ մօտ կան նաեւ մի քանի ուրիշ վարդապետաց և քահանայից գերեզմաններ, արձանագրութիւններ ունեցող տապանաբառ թբրով:

Վերափոխման եկեղեցիս շինուած է համակ սրբատաշ քարե, ունի նաև խաչակիր զանգակատուն շինուած 1843ին։ Հ. Աւթեանցին վերջ Հայ-կամպոյնիկաց ուսումնա-

բանը մեաց տիրացուներու ձեռք, և բանի
մը տարի ալ փակ. միայն Հ. Արմեն Շա-
հինեանցի ժամանակ, Միսաց էօթսիզեանց
ուասցչի ձեռքով Քիչ մը յառաջաղիմեց:
1875 թուին հին բազարէն մի քանի վրա-
խօս Հայ-կաթոլիկներ՝ նոր բազարը բնա-
կութիւն հաստատելով, կը յաջողին վրախօս
բահանայ մը ունենալ Վերափոխման եկե-
ղեցւոյ մէջ, որ և ժամանակ մը հայերէն Աւետարանէ վերջ՝ կը կարդար նայնը վրա-
ցերէն, որով երկար ժամանակ ոչ սակաւ
կոփներու ապիթ եղաւ Հայ և վրախօս կա-
թոլիկներու մէջ: Ի վերջոյ Հայք, որ Հերմ
պաշտպան են ազգային ծիսից և արարո-
ղութեանց, յաղթող կը հանդիսանան, և Վրաց
լեզուն եկեղեցւոյ մէջ զործածուիլը տէրու-
թենէն կ'արգիրուի:

Հին քաղաքի մէջ եղած Հայ-կաթողիկեաց
եկեղեցներէ Ա. Նշան կամ Երևանան Ա.
Խաչ հողաւածը, կառուցուած է բարձրը բրբան
վրայ, Հայոց մէջին գարու եկեղեցեաց ձե-
ւով, ոչ այնչափ սրածայր կաթողիկէւ, որ
բաւական հնութեան նշան է: 1828ին պա-
տերազմի ժամանակ, Շուասց յարձակունըը
կ'ուղղուի եկեղեցւոյ վրայ, ուր աննկարա-
գրելի կար մը տեղի կ'ունենայ: Զանազան
ժամանակաց մէջ նորոգուած է եկեղեցիս,
սակայն Տիւառուա յոյժ արտառոց (baroque)
կը գտնէ այդ կերպնորոգութիւնը, որոյնե-
տեւ որմոց մէջ պէտք եղած տեղերը՝ փո-
խանակ նոր սրբառաշ քարեր գործածելու,
ագուցած են շորջը գտնուած ասպանաբա-
րեր կամ խաչարաններ, հանգերծ կիսաեր
արձանագրութեամբք: Պ. Պրսուէ ընօրինա-
կած և հրատարակած է այդ արձանագրու-
թիւններէն մի քանին, որը կը կերպերին
Զ (= 1451), ԶԳ (= 1454), ԶԻԴ (=
1475) և ԶՒ (= 1491) թուականներուն:
Նշանաւոր է եկեղեցւոյ գերեզմանատունը,
հին ոնով իսյակերպ տապանացարերով, յորս
կայ նաեւ ՊՃՅ: (= 1426) թուականաւ ար-
ձանագիր: Սպիտակ կճեայ քար մը նոյն
գերեզմանատան մէջ կը ծածէէ Հայ-կա-
թողիկ Քետրու Յովսէփովիչ Քէժանով քա-
ջազնի նշանարները, որ 1828 տարւոյն օ-
պսատա 4 մէջ յարձակման պահուն բաժա-

թեամբ ինկաւ : Իսր զիւցազնական արդինքն ճանշցաւ Ախալցիսայի ժողովուրդն, և երկու գեղեցիկ արձանագրութեամբք ոռուերէն և վրացերէն, զարդարեց նորա տապանացքարը : Ս. Խաչի վերջին նորոգութիւնն եղած է 1866ին, Ազնաւորեան եղբարց արդեամբք :

Ս. Աստուածածին, որ կառաւցուած է 1356 թուին Ս. Խաչին ըլչ մը աւելի վար, ամենեւին եկեղեցւոյ նմանաւթիւն չունի, այլ սովորական տուն մ' նորոգուած 1442ին : Արեւելեան որմի վրայ կան երկու արձանագրութիւնք, որոց միզոյ մէջ յիշուի կառուցանող եկեղեցւոյ Արքահամ արեղայ, և երկրորդին մէջ ոմն Շարապադ նորոգուու : — Ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցւոյ մէջ քարի մը վրայ, որ աւանդատան դրոն իրեւ բարաւոր կը ծառայէ, կայ հայկական Զիշ (= 1298) թուականը առանց այլ յիշատակութեան . ուրիշ չորս խաչաբանգակներով զարդարուած քարի մը վրայ ալ կը կարդացուի 1511 թուականը : Եկեղեցւոյ անմիջապէս մօտ կը տեսնուի մեծ խաչարձանի մը քարի խարիսխն, վլաց եկեղեցական տառերով գեղեցիկ արձանագրութեամբ, բայց առանց թուականի : Գետրու Բնապուրեան, եկեղեցւոյ շինութեան թուականը կը գնէ 1750 : Նոյն անձը կ'ըսէ Հայ-կամոլիկաց երկրորդ Ս. Խաչ Քարաչէն եկեղեցին, կառուցուած է 1694 թուին, արդեամբ Մեփիսեան եղբարց * :

Հ. Առևիւս կիրակուան

Ճարայարելի

* Տեղայու ողութեան պատճառաւ հարկադեպանք Ախալցիսայի նկարագրութեան մասցած մասը յաջորդ ամսուան թողուլ :

Պ. Ա Տ Ե Ր . — Կիսամիսեան քեր կրօնական գիտական գրքու 50 գանձկա :
Հայոց՝ Rédaction du Badguere, Constantinople, Péra, rue YÉCHIL N. 1.

L E COURRIER DES BALKANS. — Ապահով և զանազան առաջարկուած գաղաւ լրագրութեան հակառակ գրքու 30 գանձկա :
Հայոց՝ Rédaction du journal Courrier des Balkans. SOPHIA (Bulgarie).

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

1. Զեսսիլիայի առաջին աղօթքը . մանկական զրոյց . բարգմանուրիւն Պեռ Պաօչեանցի : — Թիֆլիս, Ալագ . տպար. Ա. Մարտիրոսանցի, 1889 : 8°, 80 էջ. գին 20 կոպ. :

Թէ կրթական զրբերը ի՞նչ մեծ կարեւորութիւն ունին զաստիարակութեան մէջ, բաշայայց է : Կ'ըսէ առածքը . Մասը պատիկուց կը ծոփի Համարելով մարդկութիւնն ալ տեսակ մը ծոփ, պէտք ենց տալ անոր ուղած ձեմբին, երբ զեռ իր միջմ ու ճառուկ հասակն մէջ է : Այս բանիս աւելի հոգ պիտի տանին ծնողը . խանձարուքըն սկսեալ պէտք են իրենց մայրենի կաթին հետ ծծել տալ անոնց՝ սրտի կրթութեան այդ սերմերը, ուրոնց օր մը ծլին բողբոջն անոնց սրտին մէջ . վասն զի շատ անգամներ նոյն իսկ ծնողը կ'ըլլան պատճառ իրենց որդոց յոսի զաստիարակութեան, ինչպէս կը տեսնուի ներկայ վէպիս մէջ :

Ուրախալի է տեսնել որ Թիֆլիսի Հայոց Հրատ. Ընկերութիւնը՝ մասնաւոր փոյթ ու խնամ՝ կը տանին զաստիարակութեան, հրատարակելով կրթական վէպեր, որոց ընթերցումը՝ հարկաւ իրենց օգուաները կ'ունենայ մանկական այդ թարմ սրտերուն մէջ, և հռն արդէն զննուած սերմիկներուն ոգի կու տայ :

Զեսսիկայ՝ զիսարաց, ստարորիկ, ցնցոտիների մէջ գամաթեամուած աղջիկ մը, զուսար անարժան մօր, որ կը տանջէ, կը չարչար զանի, հակառակ իր մօր արգելից, կը ծանօթանայ Աստուծոյ անուան, իր առաջին աղօթքը կ'ըսէ անոր, և իր աղօթքով քարացած սիրա մը կը կակըցընէ : Թարգմանութեան լիզուն մաքուր, վարժ զրշի զրոշմը կը կրէ :

2. L'Idiome des Inscriptions Cuneiformes Urartiques, par Joseph Sandaljian. Rome, 1898. — Prix fr. 1,25.

Վահայ և իր շրջակայից բնեռազիր ար-